

1.3. ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սպառողական շուկայում 2010թ. սեպտեմբերին ինչպես և ընթացիկ տարվա բոլոր ամիսներին 2009թ. դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է գնաճ: Սպառողական գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը պայմանավորված է համաշխարհային շուկայում զարգացումների, պարենային որոշ ապրանքատեսակների գնաճի, առանձին պարենային ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխությամբ:

2010թ. հունվար-սեպտեմբերին գների և սակագների փոփոխությունները

/տոկոսներով՝ նախորդ ամսվա նկատմամբ/

2010թ.	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Սղաճը		Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ³⁾	Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքս ⁴⁾	Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքս ⁴⁾
		2009թ. դեկտեմբերի նկատմամբ	2006թ. նկատմամբ				
Հունվար	101.6	101.6	124.6	84.9	106.0	100.3	116.5
Փետրվար	101.2	102.9	126.2	107.9	104.2	102.2	85.5
Մարտ	100.9	103.9	127.4	113.7	99.1	102.4	109.0
Ապրիլ	101.1	105.0	128.8	98.5	96.8	110.1	98.1
Մայիս	100.6	105.6	129.5	97.3	98.5	89.2	107.8
Հունիս	99.5	105.1	128.9	95.2	99.7	100.2	93.9
Հուլիս	99.7	104.8	128.6	102.2	101.2	92.7	99.0
Օգոստոս	101.2	106.1	130.1	104.2	95.1	110.8	95.1
Սեպտեմբեր	100.8	107.0	131.2	96.4	87.8	101.9	103.6
2010թ. հունվար-սեպտեմբերը	108.5	-	-	126.2	111.3	123.9	102.0
2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ							

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության՝ ԼՂՀ-ում գների դիտարկումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին մոտ ընկած ժամանակահատվածում. հանրապետության 7 բնակավայրերում՝ 411 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների գծով:


²⁾ Գների դիտարկումը կատարվում է 38 արդյունաբերական բազային ձեռնարկություններում՝ 40 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 31 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁴⁾ Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2009-2010թ.թ. հունվար-սեպտեմբերին

(նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %)




ԱՐՏԱՐԺՈՒԹՎԱՅԻՆ ՇՈՒԿԱ:

ԼՂՀ սպառողական զների ինդեքսի ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2010թ. հունվար-սեպտեմբերին

(%)

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
<i>Սպառողական զների ինդեքս</i>									
2009թ. դեկտեմբերի նկատմամբ	101.6	102.9	103.9	105.0	105.6	105.1	104.8	106.1	107.0
նախորդ ամսվա նկատմամբ	101.6	101.2	100.9	101.1	100.6	99.5	99.7	101.2	100.8
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	107.7	110.6	111.2	108.0	106.6	106.9	107.8	109.1	108.9
<i>ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը</i>									
2009թ. դեկտեմբերի նկատմամբ	99.2	100.0	103.6	103.7	101.2	98.1	96.4	96.3	95.5
նախորդ ամսվա նկատմամբ	99.2	100.8	103.6	100.1	97.6	97.0	98.2	99.9	99.2
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	123.6	124.6	107.8	105.9	103.4	101.8	100.4	98.3	95.7
<i>Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը</i>									
2009թ. դեկտեմբերի նկատմամբ	96.8	93.7	96.2	95.3	87.0	82.0	84.5	85.1	85.3
նախորդ ամսվա նկատմամբ	96.8	96.8	102.7	99.0	91.3	94.2	103.1	100.7	100.3
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	133.6	133.3	112.1	107.9	95.1	88.7	91.4	88.9	85.8

ԼՂՀ սպառողական զների ինդեքսի. ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին. տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100.0)



2010թ. սեպտեմբերին 2009թ. դեկտեմբերի համեմատ սպառողական զների 7.0 տոկոս աճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 4.5 տոկոս նվազում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նշված ցուցանիշների 3.3 տոկոս գնաճի և 23.4 տոկոս աճի դիմաց:


ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2009թ. սեպտեմբերին կազմել է 379.88 դրամ. իսկ ընթացիկ տարվա սեպտեմբերին՝ 363.36 դրամ՝ նվազելով 4.3 տոկոսով:

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2010թ. սեպտեմբերին 2009թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 107.0 տոկոս:

Սպառողական գների ինդեքսի հավելվածի տեմպը 2000-2010թ.թ. սեպտեմբերին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ.%)



Սպառողական գների ինդեքսը 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին

(%)


	Ընդամենը		այդ բովան					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2009թ.								
Հունվար	99.2	99.2	98.0	98.0	98.6	98.6	102.0	102.0
Փետրվար	98.6	97.9	97.7	95.7	99.3	97.9	100.2	102.1
Մարտ	100.4	98.2	100.6	96.3	101.8	99.6	99.5	101.6
I եռամսյակ	98.2*	x	96.3*	x	99.6*	x	101.6*	x
Ապրիլ	104.0	102.3	103.4	99.7	103.7	103.4	105.3	106.9
Մայիս	101.9	104.2	102.3	102.0	103.0	106.3	100.6	107.5
Հունիս	99.2	103.4	97.8	99.8	101.8	108.2	100.6	108.1
II եռամսյակ	105.3	x	103.6	x	108.6	x	106.4	x
Հուլիս	98.9	102.3	97.7	97.5	100.7	108.9	100.4	108.5
Օգոստոս	99.9	102.2	99.5	96.9	100.3	109.2	100.5	109.0
Սեպտեմբեր	101.1	103.3	99.8	96.7	101.2	110.4	103.3	112.3
III եռամսյակ	99.9	x	96.9	x	102.0	x	103.9	x
2010թ.								
Հունվար	101.6	101.6	101.2	101.2	100.7	100.7	102.8	102.8
Փետրվար	101.2	102.9	101.3	102.6	100.3	100.9	101.5	104.4
Մարտ	100.9	103.9	101.6	104.2	100.8	101.8	99.9	104.3

	Ընդամենը		այդ թվում					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
I եռամսյակ	103.9*	x	104.2*	x	101.8*	x	104.3*	x
Ապրիլ	101.1	105.0	100.4	104.6	101.6	103.4	102.2	106.6
Մայիս	100.6	105.6	100.8	105.4	100.7	104.1	100.1	106.7
Հունիս	99.5	105.1	99.2	104.6	99.2	103.3	100.2	106.9
II եռամսյակ	101.2*	x	100.4*	x	101.5*	x	102.5*	x
Հուլիս	99.7	104.8	99.7	104.3	98.9	102.2	100.2	107.1
Օգոստոս	101.2	106.1	101.9	106.3	100.3	102.5	100.4	107.5
Սեպտեմբեր	100.8	107.0	101.5	107.8	100.0	102.4	100.1	107.7
III եռամսյակ	101.8*	x	103.1*	x	99.1*	x	100.7*	x

*) Եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա նկատմամբ

2010թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.8 տոկոս. այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.5 տոկոս. ոչ պարենային ապրանքներինը՝ 100.0. ծառայությունների սակագներինը՝ 100.1 տոկոս:

ԼՂՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2010թ. հունվար-սեպտեմբերին տոկոսներով (նախորդ ամիսը=100.0)



Սպառողական գների ինդեքսը 2010թ. սեպտեմբերին 2009թ. սեպտեմբերի համեմատ կազմել է 108.9 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 104.6 տոկոսի դիմաց: Նշված ամսում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 111.6 տոկոս. ոչ պարենային ապրանքներինը՝ 104.6. իսկ ծառայությունների սակագներինը՝ 106.7 տոկոս:

Գների միջին ամսական տղաճը 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով)

	2009 թվականի հունվար-սեպտեմբեր	2010 թվականի հունվար-սեպտեմբեր
Սպառողական գների ինդեքս	0.4	0.7
այդ թվում՝		

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2009 թվական հունվար-սեպտեմբեր	2010 թվական հունվար-սեպտեմբեր
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	-0.4	0.8
ոչ պարենային ապրանքների	1.2	0.3
ծառայությունների	1.4	0.8
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	22.0	
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	-1.1	

2010թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 108.5 տոկոս. այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 106.8 տոկոս. ոչ պարենային ապրանքներինը՝ 110.2. ծառայությունների սակագներինը՝ 110.8 տոկոս. իսկ նախորդ տարվա հունվար-սեպտեմբերին 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 103.5 տոկոս. 101.3. 100.9 և 108.9 տոկոս:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: Պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 2010թ. սեպտեմբերին. նախորդ ամսվա համեմատ. գրանցվել է 1.5 տոկոս գնաճ:

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ընդհանուր աճը երրորդ եռամսյակում կազմել է 1.0 տոկոս. այդ թվում հուլիսին՝ -0.3 տոկոս. օգոստոսին՝ 1.9. իսկ սեպտեմբերին՝ 1.5 տոկոս:

**Առանձին պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները
2010թ. հունվար-սեպտեմբերին**

	2010թ.				2010թ. սեպտեմբերը 2010թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար սեպտեմբերը 2009թ. հունվար- սեպտեմբերի նկատմամբ	2010թ. սեպտեմ- բերը 2006թ. նկատմամբ
	հունվար	մարտ	հունիս	սեպտեմ- բեր			
	2009թ. դեկտեմբերի նկատմամբ						
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	101.2	104.2	104.6	107.8	101.5	106.8	134.5
Պարենային ապրանքներ	101.4	104.6	104.8	108.2	101.6	107.1	137.2
հացամթերք	101.1	101.2	101.2	113.8	106.9	102.4	159.8
մսամթերք	100.2	112.0	115.2	115.7	100.1	113.3	140.5
ձկնամթերք	100.5	101.7	107.1	107.3	100.4	106.4	120.7
կաթնամթերք	101.7	102.8	88.8	98.1	104.2	106.9	131.0
ձու	97.5	94.8	87.2	93.6	104.2	96.2	94.9
կենդանական և բուսական յուղ	100.3	104.0	106.5	107.5	102.1	110.1	139.5
միրգ	100.6	104.1	126.4	99.2	91.8	116.6	147.6
բանջարեղեն և կարտոֆիլ	111.4	111.7	103.2	99.2	87.3	109.1	87.5
շաքարավազ	100.4	109.6	108.5	100.8	100.7	123.0	115.1
սուրճ. թեյ. կակաո	100.6	101.1	101.8	103.0	100.4	108.7	147.0
հրուշակեղեն	100.1	100.5	102.4	103.1	100.1	106.2	119.6
ոչ ոգելից խմիչք	100.0	100.0	100.2	99.9	100.0	102.0	130.2
ոգելից խմիչք և ծխախոտ	100.0	100.9	103.3	103.8	100.0	103.7	112.0

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ

	չափի միավորը	2009թ.			2010թ.		
		մարտ	հունիս	սեպտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր
Միս տավարի	կգ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կաթ	կգ	15.7	16.2	16.6	12.8	11.8	11.9
Պանիր (տեղական)	կգ	70.2	52.0	64.3	59.4	41.4	56.5
Բուսական յուղ	լ	48.1	46.6	46.3	36.2	34.1	35.9
Չու (տասնյակ)	տասնյակ	37.5	35.0	36.8	28.1	24.6	26.3
Հաց	կգ	22.0	21.8	21.6	17.0	16.1	18.3
Մակարոն	կգ	28.3	28.0	27.8	21.4	20.3	21.0

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	չափի միավորը	2009թ.			2010թ.		
		մարտ	հունիս	սեպտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր
Վերմիջել	կգ	28.6	28.3	28.1	21.3	20.2	20.9
Շաքարավազ	կգ	19.5	20.2	22.5	20.1	18.9	17.5
Բրինձ	կգ	37.3	39.6	39.0	31.2	29.5	29.5
Աղ	կգ	10.9	11.4	11.4	9.0	8.6	8.6
Կարտոֆիլ	կգ	10.8	14.3	10.2	7.5	10.8	14.4
Խնձոր	կգ	21.8	33.5	19.2	17.6	28.7	21.8
Թեյ	տուփ	25.4	29.0	30.2	25.5	24.6	24.9

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները 2009-2010թթ. երրորդ եռամսյակում


/դրամ/

	չափի միավորը	2009թ.			2010թ.		
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր
Միս տավարի	կգ	1467.6	1467.6	1467.6	1983.0	1983.0	1983.0
Միս խոզի	կգ	2611.1	2625.5	2625.5	2622.9	2637.0	2637.0
Թարմ կաթ	լ	237.6	241.5	243.1	234.2	234.2	235.4
Պանիր	կգ	755.4	890.9	943.7	947.1	1029.1	1121.1
Բուսական յուղ	լ	671.1	666.4	679.7	670.6	676.1	711.8
Չու	տասանյակ	513	513	540	493.5	501.0	521.9
Հաց	կգ	316.6	316.9	316.8	319.8	339.5	363.7
Մակարոն	կգ	407.6	407.0	407.6	402.9	408.2	416.4
Վերմիջել	կգ	411.4	412.1	412.4	400.5	406.1	415.0
Շաքարավազ	կգ	298.2	305.4	330.3	350.6	342.3	346.6
Բրինձ	կգ	580.2	573.2	572.7	573.5	573.5	584.4
Կարտոֆիլ	կգ	169.5	155.7	150.2	240.2	301.1	285.6
Թարմ կաղամբ	կգ	162.1	143.3	149.1	275.6	321.7	209.1
Գլուխ սոխ	կգ	330.7	323.7	284.5	328.3	310.6	310.2
Գազար	կգ	414.3	326.2	273.9	432.4	398.7	310.8
Խնձոր	կգ	430.5	333.0	282.0	612.5	535.2	432.7
Թեյ	տուփ	432.7	439.4	442.6	487.3	488.1	492.8

ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: 2010թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների գները մնացել են անփոփոխ: 2010թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի 2.2 տոկոս գների նվազում:

2010թ սեպտեմբերին դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 2.4 տոկոս գնաճ: Գնաճի ամենաբարձր մակարդակ գրանցվել է ոսկերչական ապրանքներ ապրանքախմբում (10.5 տոկոս):

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունը 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին, ըստ ամիսների (նախորդ ամիսը=100.0)



Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունը /տոկոսներով/

	2010թ.				2010թ. սեպտեմբերը 2009թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	2010թ. սեպտեմբերը 2006թ. նկատմամբ
	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր			
	2009թ. դեկտեմբերի նկատմամբ						
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում՝</i>	100.7	101.8	103.3	102.4	100.0	110.2	109.2
հագուստեղեն, գործվածք	100.4	101.1	103.1	104.0	100.9	107.1	116.9
կոշիկեղեն	100.3	101.7	104.6	105.5	100.9	108.2	119.0
վառելիք	100.1	99.2	101.6	100.2	100.0	103.0	122.6
կահույք	102.6	103.6	103.7	103.9	100.0	107.5	112.3
գորգեղեն	102.1	102.8	104.3	104.6	100.0	107.8	107.6
տեքստիլեղեն	101.9	101.5	101.9	104.1	101.4	104.9	119.1
կենցաղային էլեկտրաապրանքներ	101.4	101.9	104.1	104.3	100.4	106.3	103.9
խոհանոցային սպասք	101.5	102.1	104.5	105.4	100.0	107.1	105.2
լվացամիջոցներ	103.1	104.5	105.1	106.7	99.9	114.3	133.1
շինանյութեր	100.1	99.8	104.0	104.6	100.2	104.7	121.1
դեղամիջոցներ	102.3	103.5	104.9	104.5	99.9	114.1	115.8
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	98.4	101.2	103.7	96.2	97.8	118.1	103.9
մշակույթի ապրանքներ	101.8	100.0	97.8	97.8	100.5	100.5	82.5
գրենական պիտույքներ	100.5	100.9	100.0	103.1	100.6	104.5	108.0
գեղահարդարման ապրանքներ	101.0	102.1	102.2	103.3	100.6	109.4	124.6
ուկերչական ապրանքներ	103.0	103.0	105.3	110.5	101.1	122.8	150.2
անձնապիտո ապրանքներ	100.3	101.4	101.7	103.4	101.1	105.5	118.5

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հաշվետու տարվա սեպտեմբերին 2009թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 7.7 տոկոս աճ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի սակագների 12.3 տոկոս աճի փոխարեն:

2010թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագները կազմել է 100.1 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է կրթության համակարգի, կենցաղային բնույթի և մշակույթի ոլորտի ծառայությունների սակագների աճերով:

2010թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը կազմել է 110.8 տոկոս:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

/տոկոսներով/

	2010թ.				2010թ. սեպտեմբերը 2010թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	2010թ. սեպտեմբերը 2006թ. նկատմամբ
	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր			
	2009թ. դեկտեմբերի նկատմամբ						
Ծառայություններ. ընդամենը <i>այդ թվում՝</i>	102.8	104.3	106.9	107.7	100.1	110.8	137.9
կենցաղային	100.0	100.1	100.8	100.9	100.1	100.9	103.0
բնակարանային-կոմունալ	100.6	100.7	108.1	108.1	100.0	111.8	156.1
բուժսպասարկման	107.1	107.3	107.5	107.5	100.0	108.0	118.3
տրանսպորտի	98.3	95.7	98.5	102.9	99.8	102.4	115.8
կապի	100.0	100.0	100.0	100.0	100.0	98.4	95.4
մշակույթի	100.0	100.0	99.9	100.0	100.1	101.5	106.3

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2010թ.				2010թ. սեպտեմբերը 2010թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	2010թ. սեպտեմբերը 2006թ. նկատմամբ
	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր			
	2009թ. դեկտեմբերի նկատմամբ						
կրթության	101.4	110.5	110.5	111.3	100.7	128.7	174.0
հանգստի	97.0	97.0	97.0	97.0	100.0	98.2	109.8
հանրային սննդի	101.1	102.3	103.3	104.3	100.0	106.2	138.0
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	99.9

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2010թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսի 0.8 տոկոս գնաճը պայմանավորված է դիտարկվող բոլոր բնակավայրերում արձանագրված 0.3-1.3 տոկոս գնաճով: Հանրապետությունում դիտարկվող 7 քաղաքներից գնաճի ամենաբարձր մակարդակ է արձանագրվել Բերձորում՝ 1.3 տոկոս, 0.9-ական տոկոս՝ Ստեփանակերտում, Ասկերանում, Մարտունիում, 0.8 տոկոս՝ Շուշիում, 0.6 տոկոս՝ Մարտակերտում և 0.3 տոկոս՝ Հաղրուքում:

Դիտարկվող բոլոր քաղաքներում պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) սեպտեմբեր ամսին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է 0.5-2.3 տոկոս գնաճ:

Ոչ պարենային ապրանքների շուկայում հաշվետու ամսում նախորդ ամսվա համեմատ դիտարկվող 7 քաղաքներից 4-ում արձանագրվել է 0.1-0.4 տոկոս գնաճ: Ստեփանակերտ և Ասկերան քաղաքներում ոչ պարենային ապրանքների գները նվազել են համապատասխանաբար 0.2 և 0.1 տոկոսով, իսկ Մարտակերտում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2010թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ Շուշիում և Ստեփանակերտում սակագները աճել են համապատասխանաբար 0.7 և 0.2 տոկոսով, իսկ մնացած բնակավայրերում ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Սպառման ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2010թ. սեպտեմբերին 2009թ. դեկտեմբերի համեմատ ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

/տոկոսներով/

	Սպառողական գների ինդեքս	այդ թվում՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառման ապրանքների	դրանցից՝		ոչ պարենային ապրանքների	
			պարենային ապրանքների /ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ/	որից՝		
Ընդամենը ԼՂՀ-ում այդ թվում՝	107.0	106.7	107.8	108.2	102.4	107.7
Ստեփանակերտ	105.8	106.6	107.7	108.1	102.2	103.8
Ասկերան	112.0	109.0	111.3	112.2	101.4	119.3
Հաղրուք	106.9	104.6	105.9	106.2	100.1	110.9
Մարտակերտ	106.4	108.1	109.1	109.6	104.5	102.5
Մարտունի	107.6	104.6	105.2	105.5	102.1	114.1
Շուշի	106.0	107.4	108.1	108.6	105.1	102.8
Բերձոր	108.5	107.0	107.7	108.6	104.4	111.8

Կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2010թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ, ըստ հանրապետության հետազոտված քաղաքների

/դրամ՝ կգ-ի համար/

	միս տավարի	պանիր	կարագ	բուսական յուղ լիտր	ձու. տասնյակ	շաքարավազ	կարտոֆիլ	գլուխ սոխ	կաղամբ	խնձոր
	2009թ.									
ԼՂՀ. ընդամենը այդ թվում՝	1467,6	935,2	2 287,2	678,5	538,6	331,0	155,1	283,3	138,7	289,5
Ստեփանակերտ	1500	900	2200	658	517	326	150	280	140	300
Ասկերան	1500	900	2450	700	520	340	165	315	160	250
Հաղրուք	1400	1000	2500	700	600	340	175	300	120	250
Մարտակերտ	1300	850	2400	700	500	330	150	250	125	250
Մարտունի	1500	1000	2250	670	600	330	160	300	150	350


ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	միս տա- վարի	պանիր	կարագ	բուսա- կան յուղ. լիտր	ձու. տաս- նյակ	շաքա- րավազ	կարտո- ֆիլ	գլուխ սխ	կա- ղամբ	խնձոր
2009թ.										
Շուշի	1500	1000	2500	700	550	330	200	300	120	300
Բերձոր	-	1200	2200	750	600	350	130	250	120	250
2010թ.										
ԼՂՀ ընդամենը այդ թվում՝	1 983.0	1 128.3	3 054.1	736.3	529.4	348.8	296.6	314.4	187.0	446.5
Ստեփանակերտ	2000	1200	2964.3	710	521	330	300	300	150	450
Ասկերան	2000	1200	3038	780	560	373	290	300	200	388
Հաղբուք	2000	1000	3250	700	600	380	250	300	250	500
Մարտակերտ	2000	1000	3000	775	550	380	250	350	250	350
Մարտունի	2000	1000	3250	750	500	340	350	350	200	500
Շուշի	2000	1000	3000	750	500	350	300	350	250	500
Բերձոր	1700	1200	3250	800	500	380	300	300	200	500

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2010թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 9024.4 դրամ, ինչը 27.0 տոկոսով բարձր է նույնամուն ապրանքատեսակների նախորդ տարվա սեպտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (7104.6դրամ): Դիտարկված քաղաքներում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Մարտակերտում (8905.0 դրամ):

ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԿՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ: 2010թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 96.4 տոկոս:

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի և արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի փոփոխությունները 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին՝ ըստ ամիսների տոկոսներով (նախորդ ամիսը =100.0)



2010թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ գրանցվել է արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի 26.2 տոկոս գնաճ: Վերջինս առավելապես պայմանավորված է հանքաքարային (62.0 տոկոս), այլ արդյունաբերական արտադրության (28.1 տոկոս) և թեթև (19.8 տոկոս) արդյունաբերության ճյուղերի թողարկած արտադրանքի գների աճով:

	2010թ. սեպտեմբերը 2010թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	2010թ սեպտեմբերը 2009թ. դեկտեմբերի նկատմամբ
Ամբողջ արդյունաբերությունը՝ այդ թվում	96.4	126.2	97.4
Էլեկտրաէներգիայի, ջրի արտադրություն և բաշխում	99.1	105.0	100.2
Հանքագործական արդյունաբերություն	92.3	162.0	89.1
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	100.0	105.6	100.0
Հրատարակչական գործերի արտադրություն	100.0	100.0	100.0
Անտառային. փայտամշակման և թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	99.9	103.5	103.3

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2010թ. սեպտեմբերը 2010թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	2010թ սեպտեմբերը 2009թ. դեկտեմբերի նկատմամբ
Շինանյութերի արդյունաբերություն	99.8	106.2	95.8
Թեթև արդյունաբերություն	100.0	119.8	111.3
Սննդի արդյունաբերություն	100.8	103.0	113.5

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ: 2010թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 87.8 տոկոս:

2010թ. սեպտեմբերին 2009թ. սեպտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 107.7 տոկոս:

2010թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 111.3 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 96.3 տոկոսի դիմաց:

Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը ԼՂՀ-ում ըստ շրջանների

	2010թ. սեպտեմբերը 2010թ. օգոստոսի նկատմամբ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	2010թ. սեպտեմբերը 2009թ. դեկտեմբերի նկատմամբ
Ընդամենը ԼՂՀ-ում այդ թվում՝	87.8	111.3	124.6
Ստեփանակերտ	91.8	108.3	91.8
Ասկերան	84.6	118.3	142.8
Հաղրուք	93.3	110.1	128.3
Մարտակերտ	92.0	108.3	110.6
Մարտունի	83.5	108.8	106.7
Շահումյան	95.6	114.2	113.2
Շուշի	90.0	117.9	105.0
Քաշաթաղ	85.8	112.8	107.2

2010թ. սեպտեմբեր ամսվա գյուղատնտեսական մթերքների իրացման միջին գները ըստ շրջանների

Մթերքների անվանումը	Չափման միավորը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
հացահատիկ	կգ	-	-	-	-	-	-	-	130.00
կարտոֆիլ	“-”	250.00	270.00	260.00	230.00	250.00	225.00	210.00	220.00
բանջարեղեն	“-”	300.00	278.00	320.00	265.00	280.00	300.00	271.00	300.00
խոտ	“-”	50.00	45.00	-	-	50.00	45.00	-	-
պտուղներ	“-”	350.00	390.00	325.00	350.00	300.00	365.00	320.00	300.00
միս (կենդանի քաշով)	“-”	985.26	965.70	960.60	950.26	945.00	960.60	935.50	975.30
կաթ	լ	180.00	175.00	178.00	180.00	175.00	175.00	175.00	175.00
ծու	տասնյակ	510.00	450.00	470.00	475.00	500.00	475.00	500.0	480.00

Գյուղմթերքների իրացման գների ինդեքսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2010 թվականի հունվար-սեպտեմբերին ըստ ամիսների (դեկտեմբեր 2009=100.0)

